վերացական, գաղափարական կեանքի, իսկ Աբեղան որպէս իրական աշխարհի, եւ նրա վայելքների կեանքին: Վանահայրը սպառնում է Աբեղային դուրս անել կղզիէն: Իսկ Աբեղան այդ մասին ժամանակ էլ չունի մտածելու, նա իր Սէդայով է զբաղուած այն աստիճան որ արդէն խելագարութեան է հասած – ու այդ վիճակում բնականօրէն չպիտի կարողանայ բանավարել կեանքը, ու քանի որ Սէդան ծովի մէջ է տեսած առաջին անգամ, միայն այնտեղ նետուելով է որ կը կարծէ միանալ Սէդային:

Սիրային դժբախտ խելագարութիւնները կեանքի մէջ ինքնասպանութեան սովորական ակտով են վերջանում, եւ Աբեղայի ծով նետուիլը նոյնչափ բնական է որչափ բնականօրէն ու աստիճանաբար զարգացած այդ զգացումը Աբեղայի մէջ:

Աբեղան յամառ ու շիտակ մէկ ուղղութեամբ դէպի նպատակն է դիմում. ոչ մէկ քօմփրօմիս չէ ճանաչում: Շատ յաջող ձեւակերպուած անձնաւորութիւն է. իր հոգեկան վիճակը խիստ հետեւողական կերպով պատկէրացուած. իր խօսքերին խորապէս համոզուած, թէեւ զգացմունքների թելադրութեան տակ են իր համոզումները եւ նրանց ազդեցութեան տակ է որոշում իր անելիքը: Աբեղան վանական կեանքի մէջ մաքրութեան ու անկեղծութեան տիպար է: Այնքան քիչ են վանականների մէջ մաքուրներ, որ հեղինակի համակրութիւնը նրա հետ է – եւ այդ արտայայտւում է ուրիշ վանականների բերանով նրա մահուանից վերջ, երբ նրանք խօսում են Աբեղայի մասին:

*Հին աստուածների*ի մէջ Աբեղայի չափ կարեւոր ու առաջնակարգ տեղ է բռնում եւ Վանահայրը, որ Աբեղային բոլորովին հակադիր պայմանի մէջ է վանք մտած: Անցաջող սէրն է քշել զինքը աշխարհից եւ նա վանք է մտել մի այլ յարմար տեղ չգտնելու պատճառով: Վանականի յատուկ պաշտօնական մի նախանձախնդրութիւն ունի դէպի կրօնքը: Հենց գրքի սկիզբը նրա վէճն է Ճերմակաւորի հետ: Այդ փոքրիկ նախաբանը ամփոփ միտքն է ամբողջ գրուածքի,– Ճերմակաւորը որպէս ներկայացուցիչ Հին